

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅՈՑ ԳԵՐԵՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԴԷՊԻ ՊԱՐՄԿԱՍՏԱՆ ԶԱՀԱՐԱՐՈՒ ՀՐԱՄԱՆՈՎ 1605-1610թ.

Թարգմանութիւն հայր ֆ. Անտուան դե Գոպիայի գործից ¹⁾:

ԳԻՐԲ ԵՐՐՈՐԴ

Որի մէջ պատմուած է Հայոց գերեվարութիւնը և գաղթեցումն և այն, ինչ որ ս. Օգոստինեան Հայրերն արել են Նրանց Հոռվմէական եկեղեցուն հնազանդեցնելու համար:

ԳԼՈՒԽ Ա.

Ուր համառօտաբար պատմուած է թէ ո՞րք են այդ հայերն եւ ի՞նչքան վշտեր են կրել այս պատերազմում. եր. 341—351.



Իս տեղի համար եմ վերապահել այն տառապանքների նկարագիրն, որ կրեցին հայերն այս վերջին պատերազմների ժամանակ, որ պարսից թագաւորը վարեց մեծ թուրքի ընդդէմ, և նրանց թշուառ գաղթականութիւնը. որպէս զի պատմութիւնը շարաւրեալ լինելով ամբողջութիւնը լաւ ըմբռնուի, և որ ես միջոց ունենամ երկա-

¹⁾ Նկարագիր այն մեծ պատերազմների և յաղթութիւնների որ պարսից թագաւոր Շահ Աբբասը վարեց ընդ-

ըօրէն պատմելու այս խեղճ և հալածուած ազգի տառապանքները, որպէս զի այն ամենի ցաւակցու-
թիւնը շարժեմ, որոնք կը կարգան այս ի մեծա-
րանս այնքան վշտերի, միանգամայն և յուսալով՝ որ
սա կարող է այնպիսեաց ձեռքն ընկնել, որ կարող
են դարման տանել սրանց, կամ առ սակաւն կ'ա-
ղաչեն Աստուծուն թախանձելով՝ որ տայ նրանց այդ
դարմանը թէ հոգևոր և թէ մարմնաւոր, որովհե-
տեւ սրանք մեծ կարօտութիւն ունին թէ մէկին և թէ
միւսին:

..... Որովհետեւ եթէ մենք կամենանք որոնել մի
ազգ իշուած իւր սեփական հողից և հին բնակավայ-
րից, մենք կը գտնենք հայոց ազգը, որ ուժով և բըռ-
նութեամբ հանուած է իւր երկրից պարսից թագաւորի
հրամանագրերով և այն անձինք, որ գործադրել են
այդ հրամանները, այնքան քիչ ժամանակ են նշանա-
կել և այնքան կատաղութեամբ են վարուել, որ սրանք
իրենց ծննդավայրերը ուր սնել էին, եկեղեցիք, ուր
նրանց հայրերն ու պապերը թաղուած էին, տները,
որ իրենք շինել էին, այգիք որ տնկել էին, ժառան-
գութիւնն, որ ստացել էին, կարճ ամենայն ինչ որ
կարող է մարդուս գոհացումն պատճառել և հաճելի

դէմ տաճկաց Մահմէտ և նրա որդի Ահմէտ սուլթանների
ի ժամանակս ճանապարհորդութեան մի քանի ս. Օգոստի-
նեան կարգի անապատական կրօնաւորների, որոնց ուղար-
կել էր Փորթուգալիոյ կաթողիկ արքայ Դոմ Ֆիլիպպ երկ-
րորդը: Ի ձեռն հ. Ֆ. Անտուան դէ Գուլէայի, նոյն կարգի
կրօնաւորի: Թարգմանուած փորթուգալական բնագրից, Ռու-
ան 1646».

(Relation des grandes guerres et victoires obtenues
par le roi de Perse Cha Abbas contre les empereurs de
Turquie Mahomet et Achmet son fils en suite du voyage
de quelques religieux des Hermites de St. Augustin en-
voyés en Perse par le roi catholique Dom Philippe second
roi de Portugal. Par le P. Fr. Antoine de Gouvea, réli-
gieux du même Ordre. Traduit de l'Original Portuguais.
Rouen 1646.)

յիշատակներ զարթեցնել, լաւիտեան թողնելու և հեռանալու համար երկու սովորական օրուանից աւելի միջոց չունեցան. եթէ մենք փնտռում ենք մի բոլորովին կեղեքուած և ոտնհար եղած ազգ, ահա այդ ազգը, որովհետեւ մինչ հպատակ էին տաճիկներին, հարկի հետ միասին տալիս էին և իրենց տղայոց ընտիրներն, որ ծառայեն նրանց պատերազմներում¹⁾ (ինչպէս այդ տաճիկների սովորութիւնն է), վտանգ, որից նրանք չեն ազատուել պարսից թագաւորութեան իշխանութեան տակ ևս, եթէ Աստուած դարման չանէ: Եթէ մենք ստիպուած ենք գնալու և կենակցելու սոսկալի անագորոյն ազգերի հետ, այս խեղճ թշուառները այնպէս են շրջապատուած այդպիսի ազգերից, որ մի կողմից տաճիկներն են, միւսից պարսիկներն, այլ կողմերից հարևան են նրանց թաթարները և արաբները, որոնց ասպատակութիւններին և աւազակութիւններին ենթակայ են ամենայն օր, այնպէս որ հայերի մօտ գնալու համար պէտք է այս ազգերից մէկն ու մէկի միջով անցնել և իմանալու համար՝ թէ ո՞րն է դրանցից ամենից անգութը (քանի որ նրանք ամենքն էլ անչափ անգութ են), տեղեկանում եմ, որ սրանցից նոքա են, որոնք աւելի քաղցր են վարում և իրենց փաղաքշանքով և լաւ վարուողութեամբ իրենց հաւատին են դարձնում սրանց: Եւս առաւել ասում է մարգարէն սա մի յուսացող և ուղեհար (Expectantem et conculcatam) ազգ է. եթէ թշուառը ապրելու համար յուսով է սրնւում, սրանք ևս ապրելու համար ուրիշ ոչինչ չունեն, քանի որ ներկայիս ոչ մի լաւութեան նշոյլ չունին, ուրեմն ապագայի յուսով է որ ապրում են: Եւ այս բարիքի ստուերն ևս առաւել փոքրացնելու համար պէտք է ասել, որ նրանց յոյսերն այնքան հեռակայ են, որ նրանք իրենց վիճակի փոփոխութիւնն այլ կերպ

¹⁾ Յայտնի է որ տաճիկները ժողովելով մանկահասակ քրիստոնեաներին, կրթում էին իբրեւ մահմեդական զինուորներ, որոնք կազմում էին ենիչլերիները կատաղի բանակը, հմմտ. Միք. 2ամչեան Հ. պատմ. հատ. Գ. 512—513:

չեն սպասում, բայց եթէ որ և է քրիստոնեայ թագա-
ւոր նուաճէ բոլոր մահմետականներին, որոնցով իրենք
ըրջապատուած են.... Որ գետերի յորձանքն ու յորդու-
թիւնը կարող է քանդել և աւերել, նրանց երկիրը, պարզ է
այն ամենի համար, որ տեսնում է թէ հայերն ընկած
են տաճիկների և պարսիկների մէջ տեղը, որովհետեւ
հէնց որ այս երկու երկրների թագաւորները պատե-
րազմ են ունենում միմեանց դէմ, կռուի սովորական
դաշտը Մեծ Հայքն է. դրա պատճառով և դրա
համար է որ կռոււմ են այնքան մեծ բանակներ
իւրաքանչիւր կողմից, ուստի դիւրին է դատելը թէ
քանի քանի անգամ է նա աւերուել մինչև վերջին օ-
րերս, երբ բոլորովին անապատ դարձաւ պարսից
թագաւորի ձեռքով, որ ահա պիտի պատմենք....

Այս ամբողջ նահանգին (Հայաստանին) տիրապետե-
ցին, գրեթէ միւսնոյն ժամանակը մարաստանի հետ,
պարսիկները, երբ թագաւորում էր Մեհմէտ Խուտա-
բէնդան, այժմ թագաւորող Շահ Աբբասի հայրը ¹⁾. Հայ
ազգը թէ այս պատերազմների թէ տիրապետների փո-
փոխութեան պատճառաւ մեծամեծ աղէտներ և հալա-
ծանքներ է կրել, Տաճիկներն իրենց բռնութեամբ մե-
ծապէս ծանրացրել էին հարկերը, ահա թէ ինչո՞ւ նրանք
գրեթէ ամենքը ցանկանում էին կրկին պարսից տիրա-
պետութեան տակ ընկնել, որ իրանց փորձին նայելով
աւելի մեղմ էին վարւում: Բայց հազիւ է պատահում,
որ խեղճ թշուառները կատարելապէս հասնեն իրենց
ցանկացածին, ընդհակառակն շատ յաճախ անգամ եղած
վիճակն, ինչքան էլ նա ատելի թուի, փոխուելուս աւելի
ևս վատթարանում է, ինչպէս այդ պատահել է այս խեղճ
մարդկանց, որ այնքան անգամ նուաճուել և այնքան
գերի են վարուել:

Հազիւ այդ հայերը մի փոքր հանգստացել էին ան-
ցած պատերազմներից և նորոգել էին իրենց քաղաք-

¹⁾ Խուդաբէնդա շահը Սեֆեան տան չորրորդ արքան իշ-
խում էր 1576—1586 թ. Հայաստանը նրանից շատ ա-
ռաջ էր ընկել պարսից ձեռքը: Ծ. Թ.

ները և տները, որ քիչ առաջ կործանել էին տաճիկները, երբ պարսից թագաւորը դիտաւորութիւն ունեցաւ յետ գրաւելու ամենայն ինչ, որ իւր նախորդները կորցրել էին: Եւ որովհետեւ այս կորստի մեծագոյն մասն Հայաստանն էր կազմում, Մարաստանին, իւ Տանայիս (Tanais—Tauris?) մայրաքաղաքով, տիրելուց անմիջապէս յետոյ շահը ձեռնարկեց սրան, ուր թէպէտեւ արգելուած էր կողոպտել և աւերել այն քաղաքները, որ անձնատուր կը լինէին իրեն, ինչպէս Ջուղան, որի բնակիչները սպանեցին իրենց քաղաքում եղած սակաւաթիւ տաճիկներին և ընդառաջեցին շահին սպանուած տաճիկների գլուխներ նիզակների ծայրերին, բայց սակայն միւս քաղաքները, որ նոյնը յարին, որովհետեւ այդ աւերել կարող չէին, կամ թէ որովհետեւ տաճիկ քաղաքապահ զինուորսներից ստիպուած դիմագիր եղան կամ աւելի քիչ լարգանք ցոյց տուին պարսից շահին քան թէ Ջուղայեցիք, չը կարողացան իրենց համակրութեամբ դէպի պարսիկները արգելել շահի գալուցը, և ամենայն ինչ որ կարող է կատաղութիւնը, անգթութիւնը և ագահութիւնը գործել, չը գործէ արտասովոր չափազանցութեամբ այս երկրի խեղճ բնակիչների վերաբերութեամբ: Նրանք աւերեցին և անապատ դարձրին բոլոր երկիրը, այնպէս որ քսանից աւելի հարուստ և մարդաշատ քաղաք անգթաբար և տմարդի կերպով աւարի առնուեցան չը հաշուելով աւաններն ու գիւղերը, որ այնքան շատ են թուով և այնքան բազմամարդ, որ միայն Երևանի գաւառում 1500 ից աւելի են, որոնցից մի քանիսը 400—500 բնակիչ ունին: Գլխաւոր քաղաքներն են Երևան, Նախիջևան, Շարուր և Գլխ ¹⁾:

Սրանք կողոպտուեցան և աւերուեցան, եկեղեցիք սրբապղծուեցան և ախոռների վերածուեցան, սրբոց

¹⁾ Պարսկական գրութեամբ միայն կարելի է բացատրել Ագուլիս անուան այս փոխակերպութիւնը, որովհետեւ ձայնաւորները արաբական գրութեան մէջ չը գրուելով փոխանակ Ագուլիսի գրուած կը լինէր Գլխու: Ծ. Թ.

պատկերը պատառոտուեցան և ձգուեցան կրակի մէջ, «եւ սրբութիւնն նոցա անարգնյալ» (Et sanctum earum conculcatum), և ինչ որ սուրբ բան կար նրանց մէջ նոյն վատթար վիճակին ենթարկուեց, ինչպէս ամեն մէկը նրանցից ի մասնաւորի, և հաստատ է որ մի մահմեդական սուրբ հաղորդութիւնը ձեռքին ձիւղարում էր և աղաղակում բարձրաձայն. «հա քրիստոնէից Աստուծոյ»:

... Արդ մի կողմ ենք թողնում եկեղեցիք և անհուն սրբապղծութիւնք, որ այնտեղ գործուել են միայն խօսելու այս թշուառների մասին առանձինն. այդ աւարառութիւններից, որ այնքան երկար տևեցին, սրանք ոչինչ չկարողացան ազատել, մինչև իսկ իրենց անձը ծածկելու համար, բացի այն բաներից, որ պարսիկները արժանի չհամարեցին վերցնելու, նրանց չօգնեց մինչև իսկ կարեցածները թագցնելը, որովհետև այս տմարդիք սուրբ ձեռներին սպառնում էին անգթօրէն խեղճ կանանց սպանելու՝ եթէ չասէին իրենց թէ ինչ ունին և ուր էին պահած: Գիւղերն էլ աւելի լաւ վիճակի մէջ չէին, որովհետև մինչ քաղաքների պաշարումը տևում էր, պարսիկ զնդերը գնում էին գիւղերը հարկւրներով և այնպիսի աւերումներ էին գործում այս խեղճերի մէջ որ անկարելի է երևակայել:

Ամենայն ինչ կողոպտելուց լստոյ սկսան մանուկներին գերել՝ թէ տղայոց և թէ աղջկանց, իրենց ծառայեցնելու կամ վաճառելու համար, ապա սկսան երիտասարդ կանանց և աղջկանց գերի վարել, և իրենց զգայական անարգ ցանկութեան յագուրդ տալուց լստոյ, վաճառել կամ զետեղել հասարակաց տներում որպէս զի դրամ վաստակեն իրենց համար, Այսպէս գերի վարուած և զանազան կողմերն ուղարկուած կանանց և աղջկանց թիւն անհաւատալի չէ, որ հաշուով հարիւր հազար հոգու հասնէ. և բոլորովին ստոյգ է՝ եթէ ամեն մի տեղից նրանք միմիայն տասն հոգի գերէին (որ ամենաքիչն է նրանց վերցրածներից) այս թիւը գիւրութեամբ կը լրանար. եթէ աչքի առաջ ունենանք նրանց աւերած քաղաքների, աւանների և գիւ-

ղերի թիւն այս երկրում: Ողորմելի տեսարան էր այս, որ կարող էր ամենակարծր սիրտն էլ փափկացնել, երբ մարդ տեսնում էր որ մի տուն էին մտնում չորս զինուոր (և ամենայն ինչ կողոպտելուց յետոյ) սկսում էին իրենց մէջ բաժանել երեխայոց, աղջկանց և կանանց. շարժուած ագահութիւնից և գերեվարեալների գեղեցկութիւնից և բարեկազմութիւնից, որովհետեւ այս ազգի կանանց մեծագոյն մասը շատ սիրուն է: Մայրերը կպչում էին իրենց երեխայոց և սրանք իրենց մայրերին և երկինքն էին պատառում իրենց աղաղակներով և ողբերով որ նշնքան ցաւակցութիւն շարժելու ընդունակ էին և կարող էին այլ ուրիշ ամենայն տեսակ սիրտ մեղմել, որոնց մասին է ասում մարգարէն ինչպէս երևում է. «Ոչ խնայէ յաչս նոցա»: — Զինուորներն այսպէս կողոպտելուց, սրբապղծելուց և գերելուց յետոյ ամենայն ինչ որ կար պաշարուած քաղաքներին մօտիկ գիւղերում, անցնում էր քիչ ժամանակ և ահա գալիս էին նրանց ծառաները, որոնց ագահութիւնն աւելի ծարաւի էր. ուստի և չէին թողնում նոյն իսկ այն ցնցոտիք, որ իրենց տէրերը թողել էին այդ կանանց իրենց մերկութիւնը ծածկելու, այնպէս որ նրանք ոչ միայն անպատուում էին այլ և կողոպտուում: Այս բոլոր հալածանքներից յետոյ մի նոր փորձանք եղաւ նրանց համար այն, որ շահը գլխաւոր քաղաքները երկար պաշարումներից յետոյ միայն կարողացաւ առնել, և մեծամեծ ականներ ու հողէ թմբեր ստիպուած լինելով քաղաքների շուրջը պատրաստելու (ինչպէս արդէն ասացինք) մեծ կարիք ունէր ռահվիրաների (pionnier) այսպէս երեւանի պաշարման ժամանակ հարկաւոր եղաւ 12,000 մարդ. ինչ որ անհրաժեշտ էր այս թշուառներն էին մատակարարում, որոնցից մեծ բազմութիւն ամենայն օր մեռնում էր սովից, ցրտից, թնդանօթների հարուածներից, երբ տաճիկները յարձակումներ էին գործում այդ աշխատանքները խանգարելու համար, մեծագոյն մասը նրանց սպանածներից այս մարդկանցից էին, որ անգէն աշխատում էին այդ պատուարների վրայ, եթէ նրանք ազատուում էին տաճիկների կատաղութիւնից և

թնդանօթներէց, չէին կարող ազատուել քաղցից ու ցրտից, որովհետեւ ձիւնն այնքան շատ էր, որ նրանց սառեցնում էր և թաղում տակը, իբրեւ թէ քաղցն և շարունակ աշխատանքը, որին նրանք դիմանում էին, բաւական չէր, նրանց այնպէս լառաջ էին վարում հաւածելով, որ պակաս անողորմ չէր քան թէ եգիպտացոց հալածանքը Իսրայէլի որդոց դէմ, երբ նրանք աղիւս էին գործում այնքան արտասուներով, որքան Նեղոսը նրանց ջուր էր տալիս: Այս հարուածներէց այնքան մեծ բազմութիւն մեռաւ, որ բոլոր շրջակայ գիւղերն անմարդ մնացին, որովհետեւ նրանք, որոնք ազատուում էին առաջին մարդաժողովից, փախչում էին այլուր, որպէս զի ազատուին երկրորդից, որից նրանք վախենում էին:

ԳԼՈՒԽ Բ. ԵՐ. 351—363.

Ինչպէս շահը անմարդաքնակ դարձրեց բոլոր Հայաստանն եւ այն տառապանքները որ կրեցին այս խնդր՝ մարդիկ գերեզմարութեան ժամանակ:

Շահը 1604 թ. յունիս ամսին հաստատ լուր առաւ որ Սինամ բաշան (Սինան փաշա), որ այլ կերպ կոչուում էր Սիգալա, հասել է Էրզրում կամ Ասսերի (Assirie?), որ նա բերում է մի մեծ զօրաբանակ, որպէս զի լեռս գրաւէ ամենայն ինչ, որ խլուած էր և վրէժ առնէ բոլոր տաճիկներին հասցրած թշնամանքին: Այս լուրն առնելով շահը վճռեց Արաքս գետն անցնել (ինչպէս ասուեցաւ առաջ), որովհետեւ կամենում էր տաճիկների հետ ճակատ տալ գետի միւս կողմում, որ Մեծ Հայքի (որի մասին մեիք խօսում ենք) միջավայրով է անցնում. այդ արաւ նա այն պատճառով, որ կարծում էր թէ իւր բանակի համար աւելի յարմար կըլինէր այն տեղ, այլք ասում են՝ թէ նա այդ արաւ տեսնելու համար թէ արդեօք Սինան փաշան ձմեռն էլ որ սկսում էր, կը հետապնդէ իրեն, և վերջապէս որ եղանակը իւր փոխանակ կռուի նրա դէմ և երկիրն էլ իւր մասն ունենալ այդ կռուի մէջ: Նա հրատարակել տուաւ մեծա-

մեծ պատիժներ սպառնալով, որ Հայաստանի բնակիչները դատարկեն իրենց բնակավայրերն հրամանի հրատարակութիւնը լետոյ երկու բնական օրուան ընթացքում և որ նրանք գնան իրենց բնակութիւն հաստատեն Թաւրիզից միւս կողմը, այսինքն մեծ Մարաստանից այն կողմը դէպի Պարսկաստանի ներսը:

Ջուղայի բնակիչներին, գուցէ նրա համար որ դրանց աւելի պարտաւորուած էր կամ որովհետեւ նրանք աւելի հարուստ վաճառականներ էին և կամ թէ չէ, որովհետեւ այդ երկրի ամենից մեծ վաճառաշահ ժողովուրդն էին, շահը առանձին տեղ որոշեց մի նոր քաղաք շինելու. որ էր մի գետի ափին, որ Սպահանի կողքով է անցնում և որի վրայ քաղաքի և այս տեղի մէջ կայ նշանաւոր Ալահվերդիխան կոչուող կամուրջը, որ լիշեցի վերևում. Դարձեալ որովհետեւ Ջուղայեցիք ափսոսում էին մեծապէս իւրեանց հայրենիքն և այն ամենը, որ չէին կարող տանել իրենց հետ, չը նայելով որ աւելի հարուստ էին և աւելի յարմարութիւն ունէին ճանապարհ ընկնելու, որ կատարեցին նրանք կեղծելով և ծածկելով այն տհաճութիւնը, որ զգում էին, ցոյց տալու համար թէ ինչ արագութեամբ են կատարում շահի հրամանները, որը նրանց տուել էր ուղտեր և քանի մի հեծանելիք որպէս զի գիւրութեամբ փոխադրեն իրենց ստացուածքը:

Ահա այն՝ ինչ անցաւ Ջուղայեցիների գլխով, սակայն ինչ վերաբերում է միւս թշուառներին, որ կողոպտուած և մերկացուած էին այն ամենից, որ կարելի էր ճանապարհի համար, հնար չէր լինում նրանց այս բանին համոզուելու, ինչ հրաման էլ տրուում էր, նրանք ամենայն օր լետաձգում էին իրենց ուղի ընկնելը, բայց շահը տեսնելով որ տաճիկ բանակը օրէցօր մերձենում է Ղարսին, որ Երևանին ամենից մերձաւոր քաղաքն է, ցանկանալով անմարդաբնակ դարձնել բոլորովին այն երկիրը, ուստի տաճիկները պիտի գային, որպէս զի նրանք ոչ մի ապաստանարան չը գտնեն, ոչ էլ ուտելիք իրենց և իրենց ձիանց համար, ուղարկեց գլխաւոր քաղաքներն ու գիւղերը զինուորների գնդեր, որպէս զի

ստիպեն բնակիչներին ամենատեսակ խստութեամբ իւր հրամանը կատարել: Այս հրամանատարներն այնպէս կատարեցին իրենց պարտքը, որ ի՞նչ ցաւ էլ պատճառէր այս խեղճ քսորականներին իրենց հայրենեաց սէրըն, ի՞նչ դժուարութիւն էլ որ երեւակայէին նրանք այս ուղևորութեան համար, այսու ամենայնիւ նրանք ուղի ընկան, որովհետեւ այլ ևս խօսքերով կամ լոկ սպառնալիքներով չէին հրամայում, այլ ուր որ հասնում էին սուրը ձեռներին իրենց առաջ էին կանչում տեղի գլխաւորներին և երգւում էին շահի արևով, որ եթէ որոշ ժամին ճանապարհ չընկնեն և չը դատարկեն քաղաքներն ու գիւղերը ինչպէս հրամայուած է, նրանց, նրանց կանանց և երեխայոց գլուխները կը կտրեն, հրձիգ կանեն քաղաքը և ամենայն ինչ կայրեն. այս ձևով այն տեղն հասան, որ նրանք, որոնք առաջ ճանապարհ ընկնելն ուշացնում էին, իրենք էին փութացնում, ընկնելով փողոցները խնդրելով և համոզելով ուրիշներին, որ ճանապարհ ընկնեն և դատարկեն քաղաքները, աւաններն ու գիւղերը:

Շփոթը, ողբն ու կոծը այս խեղճ հալածական տարագրեալների այնչափ էր և անքան մեծ, որ ամենաանգութ մարդկան սիրտն անգամ կը շարժէր, որովհետեւ մնալու ոչ ոք իրաւունք չունէր, իսկ ճանապարհ ընկնելու համար զուրկ էին նրանք մարդկային ամենայն հնարքից: Այնտեղ կային բազմաթիւ խեղճ կանայք, որոնց ամուսինները մեռել էին ականահատութեան և թամբեր կազմելու գործում (որի մասին լիջեցինք). շրջապատած հինգ կամ վեց մանուկներով, շատ մեծահասակ գրկած տանելու համար և փոքրահասակ ոտով գնալու, նրանց ողբերը սիրտ էին շարժում և տեսնել պէտք էր թէ ի՞նչ էին անում նրանք քաղաքների դռների առաջ, ոմանք գետին էին ընկնում, գրկւում հողը և համբուրում քանիցս. այլք հրաժեշտ էին տալիս իրենց հայրենիքին և բնակարաններին այնպիսի սրտամորմոք բառերով, որ կարծես թէ պատերը զգացմունք ունէին: Վերջապէս դուրս գալով իրենց հին հայրենիքից այնպիսի աղաղակներով և ողբերով, որ

կարծես թէ կամենում էին տապալել այդ բնակավայրերն, ուղեորւում էին դէպի տաճիկների քաղաքը (?) ¹⁾ և այնտեղից դէպի Պարսկաստանի խորքը, ոչ թէ միասին (որ անհնարին էր), որովհետև չը հաշուելով մի քանի աւաններ և գիւղեր, որ ազատ մնացին այս թըշուառ գերեզմարութիւնից, որովհետև տաճիկների գալու ճանապարհի վրայ չէին. և հաշուելով միայն այն տեղերը որ այսպէս աւերուեցան և կործանուեցան, համարում էին 60,000 ընտանիքից աւելի, որ ի հարկէ ոչ ոքին չի զարմացնիլ, որ գիտէ թէ քանի քանի գիւղեր կային այս նահանգում, առանց թուելու մարդաշատ քաղաքներն ու բազմաթիւ աւանները, որ 2000 բնակչից աւել ունէին: Այս ժողովուրդը (ինչպէս ասացինք) միասին չէր գնում և չէր էլ կարող միասին շարժուել, բայց խումբ խումբ և կարաւան կարաւան, ամենայն քաղաք, աւան և գիւղ առանձինն:

Այս խեղճ թշուառների մեծ բանակը ճանապարհ ընկնելուց յետոյ առաջին նեղութիւնը, որին ենթարկուեցաւ, ցրտիցն էր, որովհետև ձմեռն սկսում էր, որ շատ խիստ է այս կողմերում, մանաւանդ որ սրանցից մեծագոյն մասը կողոպտուած էր, վատ էր հագնուած և պառկում էր գետնի վրայ ի թշնամանս երկնքի, որ ընդդէմ էր նրանց և վատ էր վարւում նրանց հետ: Քանի որ նրանք գիւղ գիւղ էին ճանապարհորդում և ծանր էին շարժւում և ձմեռը շատ էր յառաջանում, նրանք այնքան չարչարուեցան, որ շատերը մասնաւորապէս մատաղահասակներից, զոհ գնացին: Ձմեռն այնքան դառնաշունչ էր և ձիւնն այնքան առատ որ շատերի ոտները խեղուեցան, ալյոց ականջները ցրտատար եղան և մնացին միայն չորացած ոսկորները, որովհետև ցուրտը ապականել և սպառել էր մսերը: Վկայում են որ կանանցից ոմանք քիթները սրբել կամենալով՝ պոկում էին քիթներն առանց այդ զգալու: Ես հաւատում եմ այս ամենին ն զրանից աւելի շատ բաներին, որ չեմ յիշում այստեղ, որովհետև ես փորձել եմ թէ ինչ

¹⁾ Vers la ville de Turcs. արդեօք Turcs բառի փոխանակ Tauris չպէտք է լինի, որ իմաստ ունի և ճիշդ է:

են կրում այս կողմերում ձմեռ ժամանակ ճանապարհորդողները, ինչքան էլ նրանք լաւ հագնուած լինին:

Սակայն ցուրտն ու ձմեռը չէին այս հալածանքի տառապանքները ծանրացնողները, որովհետեւ այս թիշուառները սնուած լինելով ձիւների մէջ, ձմերային սյւսաստկութիւնը նորութիւն չէր նրանց համար, բայց ամենամեծ տանջանքը պատճառում էր նրանց քաղցը, որ հէնց ճանապարհորդութիւնն սկսելու օրուանից տանջել սկսաւ նրանց, երբ տնից վերցրած սակաւիկ պաշարն հատաւ: Արդ, երբ իւրաքանչիւր ոք մեզնից ուշի ուշով չափում է այն ամենն որ այս ժամանակ պատահել է, և շնորհակալութիւն է տնում Աստուծոյց այն շնորհների համար, որ մեզ արել է և ազատել է այս տեսակ վտանգներից, մտադիւրութեամբ ըմբռնելով այսչափ մեծ թշուառութեան և աղէտի սարսափը, որ գլխենք թէ կրել են մարդիկ: Մենք տեսնում ենք մի քրիստոնեայ ժողովուրդ, որ սկսած այսքան հին ժամանակներից հաստատ է մնացել իւր հաւատի մէջ առ սուրբ Երրորդութեան խորհուրդները, առ Մարգեղութիւնն Աստուծոյ, և պահպանութիւնը եկեղեցու խորհրդների... և աստուած թոյլ է տուել դիպելու իւր խարազանն, աստուծոյց շնորհակալ լինելով որ մեզ ազատել է սոյնպիսի վորձանքներից և տառապանքներից ցաւակցինք մեծապէս տոյ խեղճ քրիստոնեաներին, մեր հալածուած և գերի վարուած մերձաւորներին, որոնք շարունակելով իրենց ճանապարհը ոչինչ չունէին ուտելու թէ իրենց և թէ իրենց մանր մանկանց համար, որովհետեւ այնտեղերն, ուսկից նրանք անցնում էին, արդէն իսկ անապատ էին դարձրել զինուորները շահի հրամանով, և թողնուել իրենց բնակիչներից, որոնք գաղթել էին, ճիշդ այնպէս, ինչպէս իրենք թողել էին իրենց բնակավայրերը նախապէս այրելով և աւերելով: Հէնց այս ուղեւորութեան սկզբից խեղճ կանանցից մեծագոյն մասը գնում էին երկու մանուկ ուսներին մէկը մէկ կողմի վրայ, մէկը միւս. և շրջապատուած մի քիչ աւելի մեծահասակներից, որոնք ոտքով կարողանում էին գնալ, և ամենքն էլ քաղցից տանջուած, լաց լինելով, ոմանք

Հոցի Համար և ոմանք մայրական ստինքի, որ ցամաքել էին, որովհետև քանի մի օր էր որ ոչինչ չէին կերել: Խոստովանում եմ որ այս վայրումս ես չեմ կարողանում պահել արտասուքս լիշեղով այն՝ ինչ որ պատահել է այս ճանապարհորդութեան ժամանակ մի քանի կանանց (որ ի մեծ ցաւ իրենց լղի էին), որոնք բոլորովին յոգնած իրենց շաւակած երեխայոց բռնից, մնում էին վաստակաբեկ ճանապարհի մէջտեղը նստած շրջապատուած միայն իրենց մանր երեխաներով, որովհետև միւսները շարունակում էին իրենց ուղին, իսկ մնացողները վերջացնում էին իրենց կեանքը քաղցածութեան մէջ, եթէ կարողանում էին տանել իւրեանց որդւոց միմեանց լետեից մեռնելու տեսարանի կսկիծը, առանց կարենալու որեւէ օգնութիւն անել: Այլք անտառներն էին ընկնում իրենց և իրենց որդւոց Համար դարման որոնելու, բայց սովորաբար կորչում էին այնտեղ:

Բայց ինչ կարելի է երեւակայել այն մայրերի մասին, որոնք իրենց ճանապարհը շարունակելով տեսնում էին որ այն երեխայք, որոնց ձեռքից բռնած տանում էին, լետ էին մնում և չէին կարողանում զնալ, և որոնց տանելու Համար պէտք էր իրենց գրկից կամ ուսերից վայր առնէին նրանց, որոնց կրում էին, և եթէ այդպէս չանէին, մնացողները կորստեան էին մատնւում, և ինչքան էլ մայրերի գութը մեծ է գէպի իրենց երեխայքն, ինչպէս այդ գիտենք փորձով, ինչ թւում է թէ այս հայ կանայք այս մասին գերազանց են ամենից, որ ես կարող եմ ստուգապէս վկայել, որովհետև իմ սեպ. հական աչքերովս եմ տեսել, որի մասին ես կամենում էի այստեղ անպատճառ լիշատակել հասկացնելու համար այն վիշտը և տանջանքը, որ այս խեղճերն զգում էին տեսնելով իրենց փոքրիկ և անմեղ որդւոց մահը, չկարողանալով ոչ մի կերպ օգնել նրանց: Կարիքն ու սովը օրէցօր աճում էր, և որովհետև այդ կանայք երբեմն աւելի ևս հակամէտ են գէպի չարը, պարծենում են թէ կարող են հազարաւոր դարման ստեղծել, դրանցից գլուխունցան այս գաղթականների մէջ, որոնք մի գիւրագիւտ հնարք մտածեցին, որ դժուարին էր գործ դնել, այդ

հնարն էր, որ ով մեռնում էր, կենդանի մնացածների համար կերակուր էր դառնում:

Այս գիտը հաւանութիւն գտած լինելով՝ զարմանալի էր տեսնել, թէ ինչպէս այդ մայրերը, որոնք այնքան քնքշութեամբ սիրում էին իրանց երեխայոց, (ինչպէս ասացինք) հասան այն վիճակին, որ իբրև կերակուր գործ էին ածում և իրենց ու կենդանի մնացած երեխայոց մէջ բաժին բաժին էին անում այդ դիակները, դրանցից մի քանիսի ընդերքը տափօրինակ չէին գտնում այն միսը, որ քիչ առաջ իրենց միջից դուրս էր եկել: Այս սովորութիւնը այնպէս տարածուեցաւ, որ դիակ չմնաց առանց գերեզմանի, որովհետև բոլոր մեռնողները իրենց գերեզման էին գտնում նրանց ստամոքսներում, որոնք կենդանութեան ժամանակ իրենց այնքան սիրում էին: Բանը հասաւ այն տեղը, որ երբ դիակները պակսուեցան ուտելու համար (որովհետև դրանց ուտելով աւելի քիչ մարդ էր մեռնում), գտնուեցան մայրեր, որոնք արդէն սովորել էին իրենց մանկանց մսին, որոնք ոչ միայն թշուառ էին, այլ նաև անգութ, այսու նոքա հաստատեցին իրենց վրայ Սենեկայի խօսքերի ճշմարտութիւնը. — «որոնց յամախ տանջում է թշուառութիւնը, նրանց անչափ խստացնում է», այնպէս որ մի տեսակ ընդհանուր համաձայնութեամբ նրանք սպանում էին իրենց մանկանց և ուտում, և թէպէտ այս մեղքը ընդհանուր չէր, բայց զարմանալի էր տեսնել, որ մարդ չկար, որ չկերակրուէր մեռած հօր, եղբօր, կնոջ, երեխայի կամ ազգականի դիակով, ըստ մեծի մասին նրանց մեռնելուց յետոյ կերակուր լինելը ընդհանուր սովորութիւն դարձաւ կենդանի մնացածների մէջ, եղան մայրեր, որ սպանեցին իրենց երեխայոց ուտելու համար...

...Այս ճառս կամենում եմ աւարտել մի ուրիշ հնարագիտութեան որ սովը սովորեցրեց փոքրիկ երեխայոց, որպէս զի այս նկատողութեամբ մարդկային գոռոզութիւնը ստորանայ, աչքի առաջ ունենալով, թէ կարիքը և կազմուածքի թուլութիւնը ինչ բանի է հարկադրում մարդու: Որովհետև սովը շատ մեծ էր, և դժուար տանելի փոքրահասակ անձանց համար, նրանք ոչինչ բան

չէին խնայում, որ կարելի էր մարսել, նրանք սկսեցին ուտել մարդկային աղբը, նրանց թշուառութիւնը հասել էր այն ծայրայեղութեան, որ արժանի էին համարում այդ կեղտոտութիւնը անձամբ փնտռելու, և կաւեաց դիպուածում մարդկանց շրջապատում էին փոքր երեխայքը, որոնցից իւրաքանչիւրը յոյս ունէր առաջինը լինելու մի այդպիսի կեղտոտ կերակուր ձեռք ձգելու: Այս բոլոր բաներին, որ ես պատմեցի, կարելի էր աւելացնել այլ ևս շատերը, որ լռում է. կարող եմ վստահացնել, որ բոլոր պատմածներս շատ ճշմարիտ են, որ ես լսել եմ նրանց եպիսկոպոսներից և այն արժանահաւատ անձինքներից միայն, նոյն իսկ այն երեխաներից, որոնք այժմ մեծացած լինելով, ամենայն պարզամտութեամբ խոստովանում են և պատմում մեզ որ իրենք արել են և տեսել, և եթէ մենք այս վկաները և այսքան թուով չունենայինք էլ. իմ սեփհական աչքերով տեսածները կճշմարտացնէին այն, ինչ որ ասացի:

Այս գերեզմարութիւնից չորս տարի յետոյ, անցնելով այն գիւղերով, ուր նրանց շահը գետեղել էր, և արդէն այն տեղ հաստատուել էին իրենց ընտանեօք, գնացի ես այցելութեան և տեսայ որ նրանք դիմանում էին այնչափ քաղցին, խեղճութեան և հիւանդութեան, որ գիւրին էր հաւատալը, թէ ինչքան աւելի շատ վըշտեր են կրել նոքա անապատների մէջ, քանի որ կարողանում են մարդաբնակ վայրերում այդքան տառապանքների դիմանալ: Աւելի հարուստները ուտում էին մի տեսակ հաց՝ պատրաստուած այնպիսի հատիկներից, որ հողի գոյն և համ ունէր, բայց աւելի դառն (կորեկ հաց). նրանք աղքատի կերպով ծածկուած էին միմեանց հետ կարուած կապերտի կտորներով. տղամարդիկ գնում էին դրացի գիւղերը աշխատանքի, երեխայք ընկերանում էին նրանց ճանապարհներին սեխի կճեպներ ժողովելու, և խաշած խոտերով անց էին կացնում նոքա իրենց թշուառ կեանքը...

... Այս բոլոր նեղութիւններով այս խեղճերի խմբերը տառապանքով հասան Թաւրիզ քաղաքը, ուր շահը նրանց մեծապէս սփոփեց և օգնեց, և երբ մի

Հայ եկաւ նրան գանգատուելու մի մահմեդականի դէմ, որ խել էր իւր կինը և դրել հասարակաց տանը, որ իւր համար փող վաստակէ, շահը բերել տուեց այդ մահմեդականին իւր առաջ և մի լաւ պատժելուց լետոյ ստիպեց կնոջը դարձնելու իւր ամուսնուն, և հրատարակեց մի հրովարտակ, որի զօրութեամբ ոչ մի հայ և ոչ մի հայուհի չէր կարող ստրուկ լինել իւր տէրութեան մէջ. այս մի մեծ բարիք եղաւ խեղճերի համար, թէպէտ և շատ ուշ էր, որովհետեւ արդէն իսկ մի քանի հազարներ ցրուած էին ամբողջ թագաւորութեան մէջ, և այն շատ հեռաւոր տեղերում, որոնցից ամենեւին յոյս չկար, մասնաւորապէս աղջկունք " փոքրիկ երեխայք, որոնք չունին ոչ մի տեղեկութիւն այս հրովարտակի մասին և ազատ չեն դատաստան խնդրելու. բայց նրանք, որոնք մերձաւոր էին շահի պալատին, օգտուեցան այս հրովարտակից և ազատ թողնուեցան, իսկ միւսները ազատուում են օրէցօր:

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԺԱՄԵԼՈՒ ԴԷՄ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Յակոբ Արքեպիսկոպոս և շնորհիւ սրբոյ Հոգւոյն վերապետուչ և պատրիարք մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, յորմէ սիրով և Աստուածային օրհնութեամբ յայտարարութիւն եղիցի բոլոր հոգեւորական դասուց կարգաւորացի վարդապետաց և բահանայից. զի թէպէտ ի վաղուց կրկին և կրկին առ հասարակ պատուիրեալ եմք ձեզ ամենեցուն չուպուխս՝ նարկիլէ՝ և սիկարա չքարշել ամենևին ոչ յայտնի և ոչ գաղտնի, զի մեր ազգի կարգաւորաց ի բնէ անտի արգիլեալ է ի սրբազան նախնեաց մերոց բարեյօժար սովորութեամբ. որ արդարեւ անվայելուչ է ամենայն կերպիւ. նոյնպէս ի գինետուն և ի խօլթուխ մէխանայ չմտանել՝ և չնստիլ, և կամ ոտքի վրայ չխմել. ահաւասիկ այսու խրատական կոնդակաւս խըստիւ պատուիրեմք եկեղեցականաց բնաւ յաւիտեան գործ չածել չուպուխս՝ նարկիլէ՝ սիկարա, և ոչ ի գինետունս և